

# ՏՊԵԱԼ ԿԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Ըստ տնօրէնութեան Ս. Աթոռոյ, որպէս յայտ է, հաստատեցաք ի նորոյ և դասարան մի յատկացեալ վասն յառանգաւորաց, զորոյ և զաշակերտսն որոշեցաք ամէլ ընտրանօք յիւրաքանչիւր վիճակէ մէն մի, որպէս զի զնորհա Ս. Աթոռոյս ամենայն ազգ մեր վայելիցէ. և այն ըստ պայմանացն զոր ունիք տեսանել ի ներփակեալ թղթիս, որ է միանգամայն և Տոմսակ ընդունելութեան պատանւոյն: Առաքելով և առ Աստուածաշնորհ Աղբարութիւնն ձեր օրինակ մի ի յիշեալ Տոմսակոց՝ կընքեալ մատանեաւ մերով, յանձնեմք Խոհեմութեան ձերում ընտրել և ի վիճակէ ձերմէ պատանի մի՝ ոչ ի հարկոց, այլ յաւէտ ի միջակայնոց և ի չքաւորաց. միայն զի իցէ բարութն և վարուք պարկեշտ և յարմար եկեղեցականութեան, և վարժ դռնէ ի հասարակ ընթերցանութեան, և յայտմ ընտրութեան պարտի իւրաքանչիւր օք վարիլ առանց աշառութեան, ունելով կէտ նպատակի մտացն զօգուտն սրբոյ Արքեպիսկոպոս: Եւս դտանելոյ զոմն ի յարմարագունից, եթէ իցէ նա կարօտաւոր ծնողաց որդի, պարտ է գտանել նմա և ինամակալու զօք յերախտաւոր երեւելեաց ժողովրդեանն, և կամ գէթ ի հասարակաց արկեղէ հոգասցին ծախք ճանապարհի պատանւոյն:

Որպէս յայտ է, յերկրորդում էջի Տոմսակին պարտին յանդիման իւրաքանչիւր հինգ յօդուածոց նշանակել զհասակ, զվարս, զանունն մկրտող քահանային և զկնքահօրն, և զամ և զօր ծննդեան պատանւոյն. նոյնպէս և զկարողութիւնն նորա ի մայրենի լեզուին ընթերցանութեան, և զանա-

րատութիւնն նորին ի կողմանէ մոր մնոյն, և որպէս յայտնի նշանակի երկրորդ պայմանաւ, եթէ պատանին գրտանիցի թերի միով և եթ ընդդէմ պայմանեալ պահանջանաց, առանց աշառութեան յետս առաքի:

Ի վերջէ յանձն արտրեալ զընտրութիւնն աշակերտելի պատանւոյն՝ խոհեմութեան աստուածաշնորհ Աղբարութեանդ, առաքել զնոյն ի Ս. Աթոռս յառաջ քան զսուրբ Օգոստին կըն, մնամք աղօթարար վասն ձեր և համօրէն Աղգիս:

Երեսօրէն.

ԱՄՆՈՒ Ս. ՅԱՆՈՒՆԻ, 1865:

## ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Եւս լարձալէս Կէն:

Աղգային մատենագրութեանց և անոնց հեղինակաց պատմութիւնը որքան որ կարեւոր համարուած է, այնքան եւս աւելի կարեւորագոյն ճշտութիւն կը պահանջուի պատմութեան պայմաններուն մէջ: Եր ազգային մատենագրութեանց՝ թէ հեղինակութիւնն ըլլան և թէ թարգմանութիւն, մեծագոյն մասը անտիպ կը մնան, վասն որոյ և ողգին գրագիտաց առաջը չըլլալով՝ ազատ մնացած են բանագրատութենէ ու անաչառ քըննութիւններէ: Կան ուրեմն հայ գրողութեանս վերաբերեալ շատ մատենագրութիւններ, որոնց հեղինակները՝ առանց իրենց երկասիրութիւնները տպագրութիւն մէջ բերուելու, ոչ արդարացի քննութեան տակ ինկած են, և ոչ պատմութեան մէջ իրենց արժանաւոր յարգը գտած,

որու պատճառ՝ հարեւանցի կամ տհաս դատողութիւնը կրնայ ըլլալ, չըսեմ կարծեաց տարբերութիւնը՝ որ խիստ շատ անգամ կրնայ հանդիպիլ նոյն հեղինակին և իւր բանադատին մէջ տեղը, որ և է տեսութեամբ ալ ըլլայ կարծիքները՝ թէ ըստ քաղաքականին, թէ ըստ ուսումնականին և թէ ըստ վարդապետականին :

Այս պատճառաւ է, որ մերազնեայ մատենագրոց մէջ կան ոմանք որոնց գրաւոր երկասիրութիւնները հրատարակուած չըլլալով՝ կամ բոլորովին անծանօթ մնացած են ազգային գրագէտներէն, և կամ իրենց բուն արժէքովն ներկայացուած չեն, վասն որոյ այս թերութիւնները լեցրնելը պարտաւորութիւն համարելով մեր խմբագրութեանս, պիտի աշխատիմք Վրագիտական յօդուածովս ժամանակ ժամանակ տեղեկութիւններ տալ այն մատենագրոց վերայ, որոնք կամ իրենք և կամ իրենց երկասիրութիւնները անծանօթ մնացած են յարգ. Ազգէն : Այս պարտաւորութիւնը կատարելը որքան որ կարեւոր է, այնքան ալ դժուարին կը համարի մեզ. բայց ճշմարտութիւնը որ մեզ առաջնորդ պիտի ըլլայ, և Ազգին ուսումնասիրոց սէրը կը քաջալերէ զմեզ ամէն դժուարութիւն յանձն առնուլ, յուսալով որ մեր այս աշխատութիւնը, որ մասն կը համարի Ազգային գպրութեան պատմութեանը, իրրու ճշմարտութեան բովէ ելածի պէս՝ կրկին բանադատութեան տակ չեն ինկնիր :

Այս կարգի մատենագրոց մէջ, թողլով հիմակուհիմայ ուրիշները, խօսինք միայն Ասայի վարդապետին վերայօք՝ որ մականուամբ Աշեցի կը կոչուի, որոյ միայն անունը լսուած է, առանց իւր գեղեցիկ և ընտիր երկա-

սիրութիւնները ծանօթանալու (Ազգին :

Ասայի Սասունի Աիւլ ըսուած գաւառէն էր, ծնաւ և ապրեցաւ երեք տասներորդ դարուն վերջերը և չորեքտասներորդին սկիզբները : Իւր տղայական ժամանակէն ուսումնասէր ըլլալով և բարակամիտ՝ ինքզինքը տուաւ ուսման, և անձանձրոյթ կը պարապէր յընթերցումն վարդապետական գրեանց : Իւր ժամանակին մէջ երեւելի էին գիտութեամբ և վարդապետութիւն Յովհաննէս Ազնկացի և Աերսէս Տարօնցի կամ Սըշեցի, և մեծն Արդան, և այլք բազումք, որոնք աստուածային գրոց հմտութեք և երկնային առաքինութեամբք ճոխացեալ ըլլալով՝ իբրեւ ճրագ ի մէջ Արեւելեցոյն Հայոց կը փայլէին : Ասայի վարդապետ Աշեցի աշակերտեցաւ վերոյիշեալ Աերսէս վարդապետին, որ միանգամայն յունական գպրութեան վարժ ըլլալով՝ հայկական գրագիտութեան մէջ ալ յառաջացած պիտի ըլլայ. թէպէտ և գրաւոր երկ մի չթողուց մեզ, այլ իւր աշակերտացը երկասիրութեանց մէջ կը փայլէ անշուշտ իւր գրիչն ալ և հայկական ճաշակը. վասն զի մի և նոյն հայեցի ընտիր ոճը եւս կը փայլէ իւր միւս երկու աշակերտացը գրուածոց մէջ, այն է Յովհաննէս վարդապետը Արժիշեցի, որ Սպինկեր կոչուեցաւ՝ 17 տարի միայն անհայտ սպ ուտելուն համար. երկրորդն էր Սիւթար վարդապետը Սասունցի, ճգնազգեաց և բարեբարոյ անձը, որ թողուցած է մեզ բաց ուրիշ գրք ուսման երէ նա և ընտիր քարոզներ<sup>1</sup> : Ասայի վարդապետ քիչ ժամանակի մէջ այնքան յառաջացաւ իւր մայ-

1 Տես ի ձեռագիրս Գրքատան Ս. Աթոռոյս համար 72 :

րենի դպրութեանը մէջ, մինչեւ արեւելեան Հայաստանի մէջ ընդհանրական դաստառն ընտրուելով, իրեն սեփական անուն իրեն յատկացաւ վարժապետական տիտղոսը, և նոյն տնտամբ սկսան զինքը ճանչնալ: Յետոյ աւելցուցին անոր վերայ նա և Սեծ անունը. վասն զի ոչ միայն արտաքին գիտութեամբը և աստուածային գրոց մէջ ունեցած զարմանալի հմտութիւններով երեւելի էր, այլ առաւել եւս իւր անձնական ընտիր ձիրքերովն և նախանձելի առաքինութեամբքը, որոյ համար նոյն ինքն Հ. Սիբայէլ վարդապետ Չամչեան կը վկայէ <sup>1</sup> «այր հեղահոգի և խոնարհամիտ ու կոչելով: Վարժապետութիւնը բրած ժամանակ միանգամայն և առաջնորդ էր Երեւանում մօտ Գայլեձոր ըստած վանքին. ուր հարիւրաւոր աշակերտներ իւր չորս գին շարուած իրր յանսպառ աղբերէ իրենց ուսման ու գիտութեան ծարաւը կը յագեցնէին. և երանելին աննախանձաբար կը մատակարարէր իւր սիրելի սանուցը աստուածային բանին քարոզութիւնը և արտաքին ուսմանց վերաբերեալ գիտութիւնը. բայց ըստ մեծի մասին սուրբ գրոց վարդապետութեան մէջ կը կայանայր իւր դասախօսութիւնը և բանական գիտութեան տարերաց՝ ըստ ներելոյ ժամանակին:

Եւոր ժամանակ նոր սկսեր էին երեւել Հայաստանի մէջ արեւմտեան եկեղեցւոյ վարդապետներ, որոնց մէջ առաջին և երեւելի է Բարդողիմէոս լատին եպիսկոպոսը Վարդապետ կարգէն: Սոյն վարդապետիս Հայաստան գալուն վերայօք այլազգ կը խօսի քան զՀ. Սիբայէլը, նա ինքն

Յակոբ վարդապետը որ իբր Թարգման կը ծառայէր Բարդողիմէոսին: Վանքի կ'ըսէ՝ Թէ Յովհան վարդապետ Վանքցի, որ Լսայեայ վարժապետի յառաջագէժ աշակերտներէն մէկն էր, լատին լեզուին և Հռովմայ եկեղեցւոյ վարդապետութեանը վերայ քիչ շատ անդեկութիւն ստանալով, ինչպէս սովորական է մեր ազգին, մասնաւոր միտում մի եւս կ'ուներնայ լատինաց վերայ. և ուղեւոր աւելի մշակել յիշեալ լեզուն, կը ճանապարհորդէր դէպ յարեւմուտս, կ'երթայ յուխտ սուրբ Ղաթբեղցն Վեարոսի և Վազգոսի շիրիմներուն, կը տեսակցի. Հռովմայ եկեղեցւոյն վարդապետաց հետ, և ի դարձին իւրում ի հայրենիա՝ հետը կը բերէ վերայիշեալ եպիսկոպոսը. ուր հասնելով՝ Յովհան վարդապետ Վանքի մէջ, որ իւր ծնած գիւղէն էր, քանի մի իւր խելքովը եկեղեցականներ կը գտնէ ու ժողով մի հաստատելով կը սկսի Հռովմայ եկեղեցւոյ վարդապետութիւնը քարոզել, անարդարանալի կերպով վարուելով իւր մայրենի ուղղափառ Եկեղեցւոյն դէմ, այսինքն՝ հիմնական փոփոխութիւն մի մոցընելով Թէ վարդապետական և Թէ ծիսական կանոնաց մէջ:

Լսայի վարժապետ, որ իւր հարազատ մօրը լուսաւորչական ճշմարիտ Եկեղեցւոյ հոգիաստին կաթամբը սնեալ ու զարգացեալ էր զաճումն հոգւոյ ի շինութիւն ոչ իւր անձին <sup>1</sup> ըստ Ղաթբեղցն, այլ ազգային եկեղեցւոյն, որոյ էր անդամ. վասն որոյ երբ լսեց յիշեալ մեղադրելի ժողովոյն անիրաւ ձեռնարկութիւններն ու նպատակը, որ էր քակել ի հիմանէ հայկական Եկեղեցին, առ ոտն հար-

<sup>1</sup> Տես Պատ. Հայոց, Հատ. Գ. Էրես 273:

կանեւով անոր սրբազան աւանդու-  
թիւններն ու շնաշխարհիկ հայրենա-  
ւանդ կարգերն ու կանոնները , չկա-  
րաց ժուժել իւր սրտին մէջ , առաւ-  
իւր սքանչելի գրիչը ձեռքը ու սկը-  
սաւ դրել առ աշակերտն իւր ապրու-  
տամբ՝ Յովհան Վռնեցին , յանդիմա-  
նելով զինքը արդար բարկութեամբ  
և աստուածային նախանձով վա-  
ռեալ , որպէս զի ձեռնթափ լինի իւր  
յառաջադիր՝ գործքէն , և քաջէ իւր  
ձեռքը անմեղ Լիկեղեցւոյն վերայ յա-  
ւիտենական արատ մի բերելէ , որոյ  
համար երբէք չսխալի արդարանայ  
ապագայ սերնդեան առջեւը , զեկե-  
ղեցին Լուսաւորչի երկրիեզկելուն և  
մշտնջենաւոր կազ ու վէճ՝ ձգելուն  
համար ազգային ամբողջութեանը  
մէջ . ինչպէս և նոյն իսկ ժամանակին  
սկսած էին թէ՛ ի մեծն Հայոս և թէ՛  
ի Լիլիկիա Յակոբ Բ . Կաթողիկոսին  
օրովը մեծ անկարգութիւն և կրօ-  
նական վէճեր ծագել : Լսայի վար-  
ժապետ իւր յանդիմանական գրու-  
թեամբը իմացուց անոր նաև Հայոց  
Լիկեղեցւոյն ուղղափառութիւնը և  
ամբիժ դաւանութիւնը , յորդորելով  
զՎռնեցին՝ որ ինչպէս Լիկեղեցւոյն  
վրդովմանը , նոյնպէս դարձեալ ինքը  
սպտածառ ըլլայ անոր խաղաղութեւ ,  
մէկգի իսկելով չար օրոմները՝ զոր  
Բարթողիմէոս լատին վարդապետին  
գործակցութեամբը սերմանած էր :

Պատմութիւնը մեզ կը սովորեցը-  
նէ , թէ Լսայի վարժապետին հոգե-  
շունչ իրատներն և հայրական աղ-  
դարարութիւնները բոլորովին անօ-  
գուտ եղան ընդդէմ Վռնեցւոյն և  
իւր ընկերակցացը յամառ մտացն ու  
խցեալ ականջաց , որոնց և ոչ Լեւո-  
նի իշխանասաստ սպառնալիքներն ու  
գաւազանը զօրեցին դիժ մի անգամ  
շեղիլ տալ իրենց ապստամբ մօրքէն :

Ի յաջորդն :

## Երկրորդ Բարոյականութիւն :

Երրորդ , մանաւանդ Վաղղիոյ  
եկեղեցական և աշխարհական գիտ-  
նոց մէջ կարծեաց և վարդապետու-  
թեանց մասին որքան մեծ տարբե-  
րութիւն ըլլալը մեր ուսումնական  
ընթերցողաց շատին անձանթ չէ :  
Լիկեղեցականք ամէն ուսմանց և գի-  
տութեանց մայր և դայեակ Լիկեղե-  
ցին կ'ընդունին և սուրբ Վրոց վար-  
դապետութենէ երբէք չեն շեղիր ,  
իմաստասիրական խնդրոց լուծումը  
որչափ որ հնար է՝ կը ջանան սուրբ  
Վրոց համաձայն վարդապետութիւն մի  
տալ : Իսկ աշխարհականք բոլորովին  
հակառակը կ'ընդունին , այսինքն որ  
և է ինդիր մի թէ՛ բնական իմաստա-  
սիրութեան և թէ՛ բարոյական իմաս-  
տասիրութեան վերաբերեալ ըլլայ ,  
իրենց իմացական լուսովն և առաջ-  
նորդութեամբ բանին կ'ուզեն լու-  
ծել :

Ստեբոս Երկրորդականութիւն  
անուամբ յօդուած մի հրատարակ-  
ուեցաւ Վաղղիոյ քանի մի աշխար-  
հական Երազրաց մէջ , և որովհետեւ  
այս յօդուածին վարդապետութիւնը  
կրնար զաւկի տէր մարդոց վնասել  
իրենց զաւակաց բարոյականութիւնը  
վտանգի մէջ դնելով , եկեղեցական  
խմբագիր մի սկսաւ պատասխանել  
յիշեալ յօդուածին և զգուշացնել  
ընտանեաց տէրերը նոյն վարդապե-  
տութեան սկզբունքներուն դէմ :  
« Ի՞նչ է այս Բարոյականութեան  
զանազանութիւնը , կը հարցնէ ե-  
կեղեցականը , որոյ անունը ալլաք դը-  
րած է » : Եւ պատասխանը նոյն հա-  
կառակորդ խմբագրէն քաղելով այս-  
պէս կ'ըսէ . « Եւրոպայի գիտութիւն  
մի է ազնուութեամբ , որ չունի և  
չկրնար կրօնական որ և է եւթագ-  
2